Diploma Programme
Programme du diplôme
Programa del Diploma

Armenian A: literature – Standard level – Paper 1
Arménien A : littérature – Niveau moyen – Épreuve 1
Armenio A: literatura – Nivel medio – Prueba 1

Wednesday 4 May 2016 (afternoon)
Mercredi 4 mai 2016 (après-midi)
Miércoles 4 de mayo de 2016 (tarde)

1 hour 30 minutes / 1 heure 30 minutes / 1 hora 30 minutos

Instructions to candidates

- Do not open this examination paper until instructed to do so.
- Write a guided literary analysis on one passage only. In your answer you must address both of the guiding questions provided.
- The maximum mark for this examination paper is **[20 marks]**.

Instructions destinées aux candidats

- N'ouvrez pas cette épreuve avant d'y être autorisé(e).
- Rédigez une analyse littéraire dirigée d'un seul des passages. Les deux questions d'orientation fournies doivent être traitées dans votre réponse.
- Le nombre maximum de points pour cette épreuve d'examen est de **[20 points]**.

Instrucciones para los alumnos

- No abra esta prueba hasta que se lo autoricen.
- Escriba un análisis literario guiado sobre un solo pasaje. Debe abordar las dos preguntas de orientación en su respuesta.
- La puntuación máxima para esta prueba de examen es **[20 puntos]**.

2216 – 0507

© International Baccalaureate Organization 2016

International Baccalaureate®
Baccalauréat International
Bachillerato Internacional

https://xtremepape.rs/

Հետևյալ հատվածներից **մեկի** մասին գրեք մի գրական մեկնաբանություն: Ձեր պատասխանը պետք է շոշափի ներկայացված երկու հարցումները:

1.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազատ աստվածն այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատությունն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել։

Թոթով լեզվիս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խոսքն որ ասացի,
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատությո՛ւն, դուրս թռավ
Իմ մանկական բերանից։

«Ազատությո՞ւն,— ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.—
Ազատությա՞ն դու զինվոր
Կամիս գրվիլ այս օրից։
Օ՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»։

— Ազատությո՛ւն, — գոչեցի, —
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատությո՛ւն։

Միքայել Նալբանդյան, *Ազատություն* (1859)

https://xtremepape.rs/

(ա) Քննարկեք բանաստեղծությունում տեղ գտած երկխոսության նշանակությունը և թե ինչպես է օգնում այն ձեր մեկնաբանությանը։

(բ) Իչպիսի պատկերավորման միջոցներ է օգտագործում Նալբանդյանը՝ բանաստեղծության մեջ ազատության գաղափարը խորացնելու ու խտացնելու համար։

https://xtremepape.rs/

2.

Ո՛ր աշխարհից կըլինի Սաքոն, թող լինի, մեզ համար ողջ մեկ է. մենք նրան ճանաչում ենք տասը-տասներկու տարեկան հասակից, երբ քարշ էր գալիս նա զորանոցների գինեվաճառների դռներին։ Ասում են, որ ոչ մի գինեվաճառ չի կարողացել երկու-երեք ամսից ավելի պահել Սաքոյին, մեր զալում[1] լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի սուրմա թոցնող. ոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել են նրա օրովը զանազան մանր-մունր առարկաներ, գինեվաճառի ծոցից կամ գլխատակին էլ, գիշերը քնած ժամանակը, թռել վերացել է նրա քսակը։ Էլ ո՞վ էր գժվելՍաքոյի հետ երկար կյանք վարել։

Թե ի՛նչպես եղավ, ի՛նչպես չեղավ, մին էլ Սաքոն դարձավ Այղր գյոլի ամարաթի լիազոր գինեվաճառը։ Շատ չտևեց, նա գրավեց բոլոր այցելուների և ամարաթի բնակիչների համակրությունը. մանավանդ նրա հարգանքը ավելացավ, երբ որ ամենքն իմացան, թե Սաքոն մովրովի[2] երկու աչքի լույսն է։ Այնուհետև գյուղացվոց պաշտպանն և թանկագին հյուրն էր Սաքոն, տանուտերների թև ու թիկունքը, գավառական ջրպետի սերտ բարեկամը, յասավուլների մտերիմն և նույնիսկ օգնականների սիրելին։ Սաքոյի անունը ամբողջ գավառի մեջ երևելի էր։ Ամեն մի գյուղացի իրան պարտք էր համարում մովրովի մոտ գալուս յուր գյուղումը գտնված ազիզ բերքիցը Սաքոյին բաժին բերել. եթե յուր տանը չլիներ, փողով կգներ ու առանց ընծայի Սաքոյի շեմքը չէր մտնիլ։ Ոչ միայն շեն գյուղերում էր Սաքոն հարգելի, քարափների, ձորերի ու քարանձավների բնակիչ՝ երկիրը սարսափեցնող ավազակների համար էլ Սաքոն մի պաշտելի անձնավորություն էր։

Ա՞խար ոնց չսիրեին Սաքոյին, նրա պես քաղցր վարվեցողություն, նրա պես ճարտար լեզու ո՞վ կունենա։

Պերճ Պռոշյան, *Հացի խնդիրը* (1968թ.)

---

[1] զալում։ ճարպիկ

[2] մովրովի։ գավառապետ

(ա) Քննարկեք, թե ինչպես է հեղինակն օգտագործում շարադրանքն այս հատվածում և ներկայացնում կենտրոնական թեմաներն ու կերպարներին։

(բ) Ի՞նչ կարող եք ասել հեղինակի կողմից օգտագործված ոճական հնարքների վերաբերյալ և թե ինչպիսի՞ նպատակ են հետապնդում դրանք։

https://xtremepape.rs/